



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

12.08.2013թ. N-----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ երիտասարդներ

Շնորհավորում եմ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ և մաղթում, որ այս ինքնատիպ ու խանդավառ տարիները Ձեզ պարգևեն անմոռանալի հիշողություններ հետագա ողջ կյանքի ընթացքում:

Համոզված եմ, որ Ձեր եռանդի, լավատեսության և արդի մտածողության շնորհիվ նպաստելու եք մեր հանրապետության օրեցօր զարգացմանն ու առաջընթացին, քանզի Դուք աշխարհին եք ներկայանում մեր ազգի ինքնատիպությամբ և պատմամշակութային արժեքներով ու միևնույն ժամանակ ներմուծում եք նոր ավանդույթներ՝ այդ ամենը արդյունավետորեն համադրելով միմյանց հետ:

Տոնական այս գեղեցիկ օրվա շրջանակներում կրկին շնորհավորելով՝ ցանկանում եմ հավելել երիտասարդների հանդեպ ցուցաբերվող անսահման հոգատարությամբ լեցուն պետական քաղաքականության իրողությունները, որոնք տարեցտարի ընդլայնում են իրենց ծավալները և ուղղությունները:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք, երջանկություն և բազմաթիվ հաջողություններ:

Հարգանքներով


Վ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ